Ալեքսանդր Շիրվանզադե

Կես ֆունտ տկողին

Հանուն ասիական անդորրության, անշարժության և թմրության ես բողոքում եմ Թիֆլիսում տիրող այժմյան կենդանության դեմ: Այս ի՞նչ է, ջանըմ, այդքան ընտրություններ կլինի՞ն: Ո՛ր կողմ նայում ես՝ քվեատուփեր են շարված, որ կողմ նայում ես, մարդիկ միմյանց սևացնում են կամ ճերմակացնում: Բանն այնտեղ է հասել, որ ամբողջ քաղաքի բնակիչները այժմ երկու գույն են ներկայացնում սև և սպիտակ:

Անցյալ օրը մտա մի պարսիկի խանութ մի ֆունտ տկողին (ֆնդրը) առնելու: Խանութպանը հպարտ-հպարտ պատասխանեց ինձ, թե ֆնդրի թանկություն է տիրում: Երկու շաբաթ առաջ քաղաքային վարչությունը գնել է բազարում եղած ֆնդրի պաշարը և ներկել տվել քաղաքային իրավասուների ընտրությունների համար:

Ես ներկա էի այդ ընտրություններին: Հանդիսարանն արքունական թատրոնն էր: Բեմի վրա շարեշար դրված էին ֆնդրրով լի տոպրակները: Թատրոնը ծայրե ի ծայր լիքն էր: Երբեք ես չէի կարող երևակայել, թե ֆնդրը՝ այս համեղ միրգը՝ կարող է այնքան սարսափ ազդել մարդկանց վրա, որքան այդ օրը, մայիսի 14-ին: Հարյուր յոթանասունևչորս հոգի իշխաններ, խմբագիրներ, իրավաբաններ, բանկիրներ, բժիշկներ, ինժեներներ, գնդապետներ, փոխ-գնդապետներ և այլն, և այլն, իրանց աչքերը տնկել էին տոպրակների վրա:

Կարծես դրանք թնդանոթներ լինեին: Երբ ժողովը բացված համարվեց, նույն միջոցին տոպրակների բերաններն էլ բացվեցին և ֆնդրրները դուրս թափվեցին

վայրերի խուժանի պես: Պետք է տեսնեիք այդ տեսարանը, որպեսզի համոզվեիք, թե մարդիկ ինչ ողորմելի, ինչ չնչին, ինչ խղճալի էակներ են, թե որքան նրանք վատ գաղափար ունեն պատիվ, հարգանք և ինքնասիրություն ասված բաների մասին, կարծելով, թե պատիվը, հարգանքը և ինքնասիրությունը կախված են ֆնդրղից:

Ես նստած էի մի խմբագրի մոտ, որ շաբաթը երեք անգամ մեծ-մեծ առաջնորդողներ է տպում իր ընթերցողներին համոզելու համար, թե մարդկանց արժանապատվությունը որոշվում է «ոչ թե ձայների քանակությամբ, այլ որակով»: Եվ այդ տաղանդավոր «թամադան» ձայների քանակությունից այնքան վախեցած էր այդ օրը, այնպես նա դեղնած էր, սփրթնած, որ կարծես թե խոլերա էր ընկել:

Բարեկամ, ինչու՞ ես դողում: Աղոթեցեք ինձ համար, աղոթեցեք, պատասխանեց ողորմելին, կես ֆունտ, միայն կես ֆունտ տկողին և իմ պատիվը փրկված կլինի:

Երկու ժամ անցած՝ ես նորից տեսա ազգային կլոունին: Նա միանգամայն փոխվել էր, զվարթացել:

Բանից երևաց, որ նրա քվետուփի սպիտակ տոպրակի մեջ սև տոպրակից 85 տկողին ավելի է երևացել:

Այսպես են սուտ ճգնավորները, փարիսեցիներն ու մաքսանենգները: Բերանացի և գրչով նրանք քարոզում են «սեր» ազգերի փոխադարձ համերաշխություն», գոռում են, թե ոչինչ նշանակություն չեն տալիս «ձայների մեծամասնությանն: Բայց գործո՞վ, օ՛օ, գործով ինչեր ասեք, որ չեն անում:

Բայց, ներողություն, ես շեղվեցի ֆելիետոնական եղանակից: Ֆելիետոնիստը պետք է ծիծաղի և ոչ թե բարկանա: Ուրեմն ծիծաղենք, եթե կարող ենք: Բայց ու՞մ վրա, և ինչի՞ վրա: Մի՞թե հիշելով այն կոմեդիան, որ տրվեց մայիսի 26-ին արքունական թատրոնում: Այո՛, դա մի փառավոր կոմեդիա էր, որի նմանը թատրոնի բեմը մինչև այդ օրը չէր տեսել: Գլխավոր դերակատարները աննման

էին իրենց դերերում, Իզմայիլի զավակը իր ամպլուային լիովին համապատասխան դեր ուներ: Բացի լավ դերասան լինելուց, նա և սցենարիուս էր և ռեժիսոր և հուշարար: Այնինչ ռեզոների դեր կատարող նիկոլաձեն բավական փչացրեց իր դերը: Առաջինը՝ նա անգիր չէր արել իր դերը, ուստի ստեպ-ստեպ կմկմում էր: Երկրորդ՝ լավ չէր հասկացել իր ներկայացրած տիպը: Մոռանալով, որ կոմեդիայումն է խաղում, նա միանգամայն տրագիկական դրության մեջ էր... Բայց ես այդ ներկայացումը մտադիր չեմ նկարագրելու, այսօր մայիսի 30-ին կոմեդիան նորից կրկնվում է: Ուստի մանրամասն ռեցենզիան թողեք հետաձգեմ մինչև եկող կիրակի:

Ներսիսյան դպրոցի համար նոր հոգաբարձուներ ընտրելու հրամանը սառը ջուր մաղեց մեր ազգային խեղկատակների վրա: Ոչ ոք չէր կարծում, թե «Արծվի դատաստանը» այդպես շուտ պետք է հասնի: Մայիսի 23-ի ընտրությունները մի-մի հարված էին խավարամիտների գլխին: Այդ օրը ես շրջում էի Թիֆլիսի եկեղեցիները, որ տեսնեմ ով ում է ջարդում: Այս անգամ էլ աղբակույտների սողունները ոտնատակ եղան, բայց ոչ բոլորովին: Մի քանիսը, որ ավելի ճարպիկ էին, դուրս սահեցին ջարդող ոտների տակից և ազատվեցին մազապուրծ: Բայց անդ եղավ «լալ և կրճտել ատամանց», երբ հայտնվեց մի քանի եկեղեցիների ընտրությանց հետևանքը:

Տիրացու Կոստոն, հանուն յուր դրոշակի փրկության, քշել, բերել էր եկեղեցու պատերազմի դաշտը, ամբողջ իր պահեստի զորքը: Երևան էին եկել արխիվ դրված գեներալներ, գնդապետներ, պաշտոնաթող ինտենդանտներ, սպիրտում պահած հին «պամեշչիկներ»: Առավոտից սկսած նրանք մաքրել էին իրանց թրերի ժանգը, սրբել էին իրանց էպոլետները և եկել կռվելու: Բայց տիրացու Կոստոյի զորքը ջարդվեց: Երեք զորապետներից երկուսը ընկան պատերազմի դաշտում: Նրանց դիակները արյունալից դաշտից հեռացնելու համար կառք էր ուղարկել մի բանկիր: Եվ ես տեսա այդ խեղճերի դեմքը գունատ, արյունաքամ և խղճալի...

Կկամենայի ֆելիետոնս սրանով վերջացած համարեք, բայց երկու խոսք ևս: Խոստովանում եմ, որ այս անգամ ինձ չհաջողվեց ծիծաղել, ինչպես վայել է

ֆելիետոնիստին: Բայց այդ ինձանից չէր կախված, կան հարցեր, որոնք այնքան լուրջ են, որ որքան կամենաս նրանց մասին կատակով խոսել՝ չես կարող: Վերջապես, ես ինչպե՞ս ծիծաղեմ, քանի որ մայիսի 23-ի պատերազմին ընկած դիակները դեռ չեն հեռացված դաշտից: Ասում են նրանց թաղման հանդեսը պետք է կատարվի երկուշաբթի, մայիսի 31-ին: Ես ներկա կլինեմ այդ թաղմանը ֆրակով և սև փողկապով...